

Վայովագին պատ արեւմնիք. Անձնական

ԹԱՐՅ ԳԻՒՇԵՆՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԿՈՌԴՈՒԹԻՒՆ

96. ՏՀՀ

## ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՑՎԱԿԻ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ

(Յերկրորդ սուրվատ բաժին)

Դուքքեր գեհուցամների լեզ գրայցմների և ամեր բամբակամ ծողադմերաւ, նադոքերի լեզ վառապահմ բացուրական աշխատամների և ամեր նազարուն լեզ գյուղական

336  
Խ-11

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԵՂԵԿԱՆ Ք  
ՊԱՏՎԵՐ ՀԱԽՉ ՊԱԽՉԻ ՅԵՎ ՊՎ-Ի ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ

1934

Շահերամի աշխատանք, Արքայութեան

Digitized by srujanika@gmail.com

Դաշտավայր 290 Վահագիս 662 Ցուցանշ 400

1. ՄԵՐԿ ԳԱԼԻՈՒԹՅԻՒՆ ԸՆՔ ՄԱՅՐԱՎՐԱՀՈՒ «ՅԱԽԱՅ-  
ԵՏՐԿԱՑՈՒՅԻՉ» ՎԱՐԿԵՐԻ ՅԵՎ ԱՐՏԱՔԻՆ «ՓՈԽԱ-  
ՌՈՒԹԵՑՈՒՆՆԵՐԻ»

ԽՍՀՄ-ն կարճ ժամանակամիջոցում տեխնիկապես  
բարելու հետևանքով, ԽՍՀՄ-ի բանվոր դաստիարակը կո-  
մունիստական կուսակցության և ընկ. Ստալինի գլխա-  
վորած նրա լենինյան կենտրոնի ղեկավարությամբ՝  
հաջողությամբ լուծեց Համաշխարհային պատմական  
նշանակություն ունեցող մի շարք կազմորագույն խըն-  
դիրներ։

Հետամնաց յերկրից դարձավ ժամանակակից տեխնիկա-  
յով զինված բարձր ինդուստրիա ունեցող յերկիր։

նուժ և յինք Յեկըոպայի ամենահետամնաց յերկրներին  
ժեկը, ամենաապրաբային յերկրներից մեկը։ Մենք դար-

Ճել ենք աշխարհիս ամենախնդուստրիալ յերկրներից մենքը: Մենք հանդիսանում ենք մանր, ցիրուցան հետամուաց հողագործության յերկիր, այժմ մենք դարձել ենք կազմակերպված, աշխարհիս ամենախոշոր մեքենայաց-ված հողագործության յերկիրը:

Մենք արորի յերկիր ենք մանք, այժմ դարձել ենք արակտորի և կրմբայնի յերկիր:

Մենք նախապատմական կյանքի միջնադարի եւ ան-

կըրներից և Ֆեղ Շիշտ վառանդ եր սպառնում, զոր մեր շահերը կվոտնահարեն նույնիսկ փոքր յերկրները: Այժմ՝ ինչպես տուանձնապես ակնառու կերպով յերեան յեկալ համագումարում, մենք զարձենք ենք տուաշնեակարէ հզոր զինված ուժ, վճռական գործոններից մեկն ամբողջ աշխարհում, խաղաղության համար մղվող պայքարում»:

(Լ. Մ. Կագանովիչ. Համ. կ(բ)կ 17-րդ համագումարի գեկուցումից):

Եերկրի սոցիալիստական ինդուստրիալիզացիայի և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում լինինյան քաղաքականության կիրառման վճռական հաջողությունների հիման վրա, առաջին հընդամյակի տարիներում կառուցված և սոցիալիստական եկոնոմիկայի հիմքը, հաջող կերպով անց և կացված քաղաքում և գյուղում դասակարգային թշնամու և նրա գործակալների աջև և ձախ ոպորտունիքնի ջախջախումը:

2. Առաջին հնդամյակի տարիներում նշանակալից չափով ուսումնասիրված են մեր յերկրի բնական հարըստությունները: 1933 թվի սկզբում մեր պետությունը զբավեց առաջին տեղն աշխարհում, ըստ հայտնարերված յերկաթի, նավթի, մարդանեցի, տուֆի, ֆանֆարի, ապատիտի, կալիային աղերի պաշարների: Բայ ածուխի և իրամիտի պաշարների ԽՍՀՄ-ն գրավեց 2-րդ տեղն աշխարհում:

Մակարված և արդյունաբնական շահագործումը նոր ածխային, նաև մթային և հանքային շրջանների (Ուրալ—Կաւղասյան կոմբինատ, Կարագաննդա, Բալխաչ, Նեֆթեղակ, Արսկո—Խաչիլովկի կոմբինատ և այլն). նոր ելեկտրոկայանների, հնոցների, մաքունների, մեքենաշինարարության նոր հսկայական գիգանտների (Ուրալմաշ, Ստալինդրագի, Խարկովի, Զելյարինսկու տրակտորային գործարանները, Գորկու, Յարոսլավի, Մոսկվայի, Ստալինի անվան ավտոգործարանները, Խաչկավի ջրանիվային կառուցման գործարանը, միշտ գաղության աշխարհական գործարաններ և այլն):

— 4 —

3. Արդյունաբերության և գյուղատնտեսության տեսակարար կշիռն ամբողջ ընդհանուր արտադրանքի ԽԸՀ (1926—27 թվերի գներով) կազմում եր՝

Տարիներ	Արդյունաբերություն	Գյուղատնտեսություն
---------	--------------------	--------------------

1913 թ.	42,1 տոկոս	57,9 տոկոս
---------	------------	------------

1929 թ.	54,5 »	45,6 »
---------	--------	--------

1933 թ.	70,4 »	29,6 »
---------	--------	--------

Ծանր ինդուստրիայի բաժինը արդյունաբերության ընդհանուր արտադրանքում 1929 թվին 48,5%-ից բարձրացավ 1933 թվին մինչև 58%-ի: Այդ տվյալները ցույց են տալիս, թե ինչպիսի հաջողություններ են ձեռք բերել ԽՍՀՄ-ի բանվոր գաղակարգն առաջին հնդամյակի տարիներում ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման հիմքի՝ առաջավոր արդյունաբերության կառուցման և ժամանակակից ծանր ինդուստրիայի ստեղծման գործում:

Խոշոր հաջողություններ են ձեռք բերված յերկրի կուլտուրական զարգացման գործում: Մեր յերկրում մտցված և ընդհանուր պարտադիր տարրուկան ուսուցում և գրագիտությունը 67%-ից 1930 թվի վերջում, բարձրացել ե 1933 թվի վերջում մինչև 90%-ի: 1929 թվից մինչև 1933 թիվը համարյա կրկնապատկվել և սովորողների թիվը բոլոր աստիճանների դպրոցներում, մեծ չափով աճել ե յերեխանների ընդգրկումը նախադպրոցական դաստիարակության մեջ: Գիտահետազոտական ինստիտուտների թիվը 1933 թվին հասել է 840-ի: Ամբողջ յերկրում տարածվել ե կինոթատրոնների, ակումբների, սպորտհարապարակների, ստադիոնների լայն ցանցը, խոշոր պրոլետարական կենտրոններում կազմակերպվել են կուլտուրայի և հանգստի պարկեր: Թերթերի միանվագ տիրամին այդ նույն ժամանակամիջոցում աճել է 12,5 միլիոնից մինչև 35,5 միլիոն:

«Պրոլետարիատն հաղթահարելով հնդամյա պղանի իրագործումից բղխող խոշոր դժվարությունները, հա-

սավ պատմական նշանակություն ունեցող հաղթանակ-ների, քաղաքի և գյուղի աշխատավորության դրության բարելավման դործում։ Զարգացման տվյալ աստիճա-նում խորհրդային կարգի առավելությունները թույլ տվեցին լիովին վերացնել գործազրկությունը, մտցնել 7-ժամյա բանվորական որը, վերացնել գյուղում աղքա-տությունը և պառապերիզմը» (ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության զարգացման 2-րդ հնգամյա պլանի վե-րաբերյալ Համ Կ(բ)Կ-ի 17-րդ համագումարի բանա-ձևից)։

4. Առաջին հնգամյակի պլանի վիթխարի խնդիրնե-րի հաջող իրականացումը պահանջեց հսկայական դրա-մական միջոցներ ժողովրդական տնտեսության բոլոր ձյուղերի և հատկապես հնգամյա պլանի հիմնական ա-ղակի՝ ծանր ինդուստրիայի և նրա միջուկի՝ մեքենա-շինարարության Փինանսավորման համար։

Կոմունիստական կուսակցությանը հայտնի յեր, վոր ծանր ինդուստրիան մի շարք կապիտալիստական յերկրներում՝ Անգլիա, Գերմանիա, Ամերիկա, կառուց-վել ե ի հաշիվ խոչոր փոխառությունների և այլ յերկը-ների կողոպուտի, ի հաշիվ աշխատավոր գյուղացիու-թյան և բանվոր դասակարգի, առանձնապես գաղութ-ների չտեսնված շահագործման։ Խորհրդային իշխանու-թյունը ծանր ինդուստրիայի և ամրող հնգամյա պլանի Փինանսավորումն ապահովելու համար ուներ մի ձանա-պարհ, դա շինարարությունն եր իր սեփական պրոյե-տարական հաշվով։ Կոմունիստական կուսակցությունը «հաշիվ յեր առել այն, վոր ունենալով խորհրդային իշ-խանությունը և հենվելով հողի, արդյունաբերության, տրանսպորտի, բանկերի, առևտրի ազգայնացման վրա, մենք կարող ենք անցկացնել տնտեսման խստագույն ոե-ժիմը նրա համար, վորպեսզի կուտակենք բավականա-չափ միջոցներ, վորոնք անհրաժեշտ են ծանր ինդուստ-րիայի վերականգնման և զարգացման համար։ Կուսակ-ցությունն ուղղակի ասում եր, վոր այդ գործը կպա-

— 6 —

Հանջի լուրջ զոհեր և, վոր մենք պիտի տանք այդ զոհե-րը բացահայտ և գիտակցորեն, յեթե ուզում ենք հաս-նել նպատակի։ Կուսակցությունը հաշիվ յեր առել բարձ-րացնել այդ գործը մեր ներքին ուժերով, առանց սարկա-ցուցիչ վարերի և արտաքին փոխառությունների» (Ստալին. Համ. Կ(բ)Կ կկե կվ. Հ-ի միացյալ պլենումում զեկուցումը)։

Կուսակցության և բանվոր դասակարգի առաջնորդի բույց ալիք մեր յերկրում սոցիալիզմի շինարարության Փինանսավորման այդ ուղիով ընթացել և ԽՍՀՄ-ի բան-վոր դասակարգը։ Յերկրի ներսում միջոցների հաջող հայթայթման այդ ուղիով ապահովված ե սոցիալիզմի լրիվ հաղթանակը ԽՍՀՄ-ում։ Անցկացնելով խստա-գույն տնտեսում պետության միջոցների ծախսման մեջ, ամեն կերպ ոգտագործելով տնտեսության խորհրդա-յին սիստեմի խոշոր առավելությունները և հեն-վելով բանվոր դասակարգի և կոլտնտեսական գյուղացիության աճող վերելքի և ակտիվության, ան-վերջ բարձացող սոցմրցման և հարվածայնության վրա, մենք հասանք այն բանին, վոր առաջին հնգամյակը 4-տարում կառուցվեց ի հաշիվ տնտեսական սոցիալիստա-կան կուտակումների և ի հաշիվ տասնյակ միլիոնավոր աշխատավորության անմիջական մասնակցության մեր հնդամյակի Փինանսավորման գործում՝ փոխառու-թյունների և խնայողությունների միջոցով։

5. Առաջին հնգամյակի սոցիալիստական շինարարու-թյան Փինանսավորումն արտահայտվեց 120 միլիարդ ռուբլի գումարով, ամրող հնգամյակի համար նախա-տեսնված 86 միլիարդ ռուբլու փոխարեն, ընդուրում, կապիտալ շինարարության մեջ ներդրված է 50,5 մի-լիարդ ռուբլի։ Սոցիալիստական կուտակման հիմնական աղբյուրները յեղել են՝ ա) համայնացված տնտեսու-թյան կուտակումները, բ) յերկրի աճող ապրանքաշեր-

— 7 —

ջանառության յեկամուտներից պետության ոգտին կատարված մասհանումները, գ) ազգաբնակչության միջոցների մորիլիզացիան, հատկապես աշխատավորության ակտիվ մասնակցության ուղղությամբ խորհրդացին պետությանը փոխառություններ տալու և աշխատավորական խնայողությունների (խնայդրամարկղների ավանդներ) միջոցով:

Համայնացված տնտեսության կուտակումները (ոգուտ և հարկ ըրջանառությունից) կազմեցին առաջին հնդամյակում 73,6 միլիարդ ռուբլի կամ առաջին հնդամյակի Փինանսավորման ամբողջ գումարի 61,3%-ը: Ազգաբնակչության միջոցների ներդրավումը կազմում եր առաջին հնդամյակում 21,5 միլիարդ ռուբլի, կամ Փինանսավորման ամբողջ գումարի 17,9%-ը, դրանից փոխառության մուծումները կազմում եյին մոտ 10 միլիարդ ռուբլի:

Ազգաբնակչության միջոցների մորիլիզացիայի ամբողջ պլանն առաջին հնդամյակում կատարվել է նշանակալից զերակատարումով: Այդ հնարավոր յեղակ, վորովհետեւ հնդամյակի 4-տարում ժողովրդական յեկամուտի 24,3 միլիարդ ռուբլուց մինչ 45 միլիարդ ռուբլուց ավելի աճման հետ, բանվոր դասակարգի թիվն աճեց կրկնակի, համեմատած 1928 թվի հետ և նշանակալից չափով բարձրացավ բանվոր դասակարգի բաժինը ժողովրդական յեկամտի մեջ: Աշխատավարձի Փոնդերն աճեցին 1928 թվի 8,15 միլիարդ ռուբլուց մինչև 34,3 միլիարդ ռուբլու—1933 թվին: Հատկապես նրա համար, վոր մեզ մոտ—

«Ժողովրդական յեկամուտի բաշխումը կատարվում ե վոչթե ի հոգուտ չահագործող դասակարգերի և նրանց բազմաթիվ պարագիտային սպասավորների հարստացման, այլ ի հոգուտ բանվորների և գյուղացիների նյութական դրության սիստեմատիկ բարձրացման և գյուղում ու

— 8 —

**քաղաքում սոցիալիստական արտադրության լայնացման» (Ստալին. Համ. կ(բ)Կ 17-րդ համագումարի գեկուցումը):**

Հնարավոր և ռեալ դարձավ միաժամանակ սոցիալիստական արտադրության և աշխատավորության սպասման մակարդակի բարձրացումը ԽՍՀՄ-ի ժողովրդական յեկամտի բուռն աճման պայմաններում:

Մեր յերկրում սոցիալիստական շինարարության անընդհատ վերելքն իրականանում եր ԽՍՀՄ-ի տնտեսական անկախության և պաշտպանունակության աճման և ամրացման հիման վրա, համաշխարհային կապիտալիզմի շարունակվող ճնշաժամի ֆոնի վրա:

**2. ՎԱՐԿԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԿԱՊԻ-  
ՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՑԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՑԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒ-  
ԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՍՏՐՈՒԹԻԿ  
ՎԱՏԹԱՐԱՅԱՅՐՈՒՄԸ**

6. Կառիտալիստական յերկրներում, հինգերորդ տարին շարունակվող տնտեսական ճնշաժամը յերեց Փինանսների խիստ վատթարացում կապիտալիզմի շատ յերկրներում: Այն ժամանակ, յերբ ԽՍՀՄ-ում պետրյուջեն ըստ յեկամուտների 1929-30 թ.թ. մինչև 1932-33 թ.թ. աճեց 11,2 միլիարդ ռուբլուց մինչև 39 միլիարդ ռուբլի, այսինքն 3,5 անգամ ՀԱ. Միացյալ Նահանգների պետրյուջեյի յեկամուտներն այդ ժամանակամիջոցում կրծատվեցին 46,4 %-ով, Գերմանիայում—31,5 %-ով, Ֆրանսիայում 24,2 %-ով: Բյուջետային գեֆիցիտները հասնում են ՀԱ. Միացյալ Նահանգներում—1,7 միլիարդ դոլարից ավելի, Անդրկայում 32, միլիոն ֆունտ ստերլինգից Գերմանիայում 610 միլիոն մարկից ավելի: Գերմանիայում 1929-30 թ.թ. յեկամուտները շատ ավելի եյին քան ծախսերը, 1931-32 թ.թ. ունեյին բյուջեյում գեֆիցիտ 5,6 միլիարդ դրամկ:

— 9 —

1933 թվին կատարվեց կապիտալիստական յերկրների բյուջեների հետազա վատթարացում:

1934 թվի համար Ֆրանսիայի բյուջետային դեֆիցիտը նախազծված է ավելի քան 6 միլիարդ Փրանկ, ձապոնիային և 1934—35 թ. համար մեկ միլիարդ իենի չափով և այլն: Կապիտալիստական յերկրների բյուջեների դեֆիցիտայնության խիստ ավելացումը պայմանավորված է գլխավորապես նրանով, վոր ծախսերի նշանակալից մասը գնում և ռազմական նպատակների համար, խստորեն կրճատելով գործազրկության համար տրվող ամեն մի տեսակի նպաստները: Բազմական ծախսերը, ներառյալ և ռազմական փոխառություններով և թոշակներով վճարումները կազմում են ՀԱՄ Նահանգների բյուջեյում՝ 66%, Անգլիայի՝ 60%, Գերմանիայի՝ 42%, Ֆրանսիայի՝ 68%: Ձապոնիայում 1934—35 թ. բյուջեյից պաշտոնական հայտարարության համաձայն, ռազմական նպատակների համար բաց և թողնվում 60%—ի հաստորեն ամբողջ բյուջեն հանդիսանում է ռազմական բյուջե:

Հարկային պրեսսի ոգնությամբ, վորն իր ամբողջ ծանրությամբ ճնշում է բանվոր դասակարգին և գյուղի ու քաղաքի աշխատավորության լայն շերտերին, հիմնական կապիտալիստական յերկրների և գաղութների միլիոնավոր աշխատավորության կյանքի մակարդակի չտեսնված իջեցման ոգնությամբ—կապիտալիստական կառավարությունների կողմից հավաքվող միջոցների մեջ մասը ծախսվում է անկասկած արդյունաբերողներին, Փինանսիստներին և խոշոր կարվածատերերին ոժանդակելու, Փաշխտական ռազմական ջոկատներն ամբացնելու համար, փորոնք կոչված են տերրորիստական մեթոդներով ճնշելու բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության անդամ փոքրադույն դըդոհությունները:

Կապիտալիստական յերկրներում սպառազինման հսկայական աճումն առաջացնում է նույնական ավելի

— 10 —

շատ անհրաժեշտություն ներքին պետական վարկի զարգացման—փոխառություններ բաց թողնելու միջոցով: Ազգաբնակչությունից հավաքված փոխառության միջոցները գնում են արտակարգ ռազմական ծախսերը ծածկելու համար: Լեհաստանում, Ռումինիայում, Ֆինլանդիայում և այլ յերկրներում, վերջին տարիներում զգալի կերպով աճել ե պետության փոխառություններով պարտքն ազգաբնակչությանը: Միմիայն ձապոնիայում պետական պարտքը կարծ ժամանակում աճել և մինչև 9 միլիարդ իենի: միայն տոկոսներն ըստ փոխառությունների կազմում են տարեկան 500 միլիոն իենից ավելի:

Միլիարդ ռուբլիներ, վորոնք հավաքվում են հարկերի և փոխառությունների միջոցով, ծախսվում են դրահապատճերի, ողային նավատորմիլի, տանկաների, հեռածիդ թնդանոթների, գաղային ռումբերի և թնդանոթային գնդակների, նոր իմպերիալիստական պատերազմների ժամանակ մասսայական: Վոչչչացման նորագույն գործիքների կառուցման վրա, ԽՍՀՄ-ի դեմ պատերազմ կազմակերպելու և պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական յելույթները ճնշելու համար:

7. Ճգնաժամի հետեանքով կապիտալիստական յերկրներում տեղի ունեցան ակցիոններական ընկերությունների, սինդիկատների և այլ մասսայական սնանկացումներ:

ՀԱՄ Նահանգներում սնանկացած ակցիոններական ընկերությունների թիվը մեծացավ 1929 թվի 22909-ից մինչև 31822-ի 1932 թվին, իսկ 1933 թվի 9 ամսում հասված 17732-ի: Սնանկացած բանկերի թիվը 1929 թվին հավասար եր 642-ի, 1930 թվին 345-ի, 1931 թվին 2288-ի, 1932 թվին 1453-ի: Գերմանիայում, Ավստրիայում, ՀԱՄ Նահանգներում սնանկացել են խոշոր բանկեր (Դարմշտադի, Դրեզդենի բանկերը՝ Գերմանիայում, կրեդիտի—Անշտադի՝ Վիեննայում և այլն), վո-

— 11 —

բոնք հանդիսացել են ֆինանսական կապիտալի կարևորագույն հենարանը:

Ճգնաժամի ժամանակամիջոցում նշանակալից չափով մեծացան ապրանքների համաշխարհային պաշարները:

Կապիտալիստները փորձում են պայքար մղել ճրգանաժամի գեմ վոչ միայն արտադրությունն իջեցնելու, այլ և պաշարներն անմիջականորեն վոչնչացնելու միջոցով: Բրազիլիան այրելու և բեռները Ովկիանոս նետելու ժանապարհով 1931 թվի հուլիսից մինչև 1933 թվի հոկտեմբերը ժամանակաընթացքում վոչնչացընել ե մոտ 4 միլիարդ ֆունտ սուրճ: Վոչնչացքած սուրճի չափն առավել քան գերազանցում ե սուրճի համաշխարհային սպառումը մեկ տարում: Դանիայում, ըստ դանիական գյուղատնտեսության մինիստրության տվյալների, առ մեկն հոկտեմբերի 1933 թվի վոչնչացված ե 117.000 դլուխ անսառուն: Միջին թվով վոչնչացվել են շաբաթական 4 հազար դլուխ խոզ. 1933 թվի հոկտեմբերից մինիստրների կարինետի կողմից մացվում ե «նշանակալից» փոփոխություններ՝ կառավարության կողմից անսառունների վոչնչացման համար բաց թողնվող միջոցների պակասության հետևանքով վորոշված ե վոչնչացնել շաբաթական միայն 33 հազար դլուխ:

ՀԱՄ նահանգներում շուկա գուրք հանված խողերի (45000 դլուխ) ամբողջ քանակի մոտ կեսը դնել ե կառավարությունը և խեղդել գետում:

Սպառման գժվարությունների կապակցությամբ ՀԱՄ նահանգներում, Դանիայում և այլ յերկրներում կառավարությունը մացրել ե պարզեատվություններ ֆերմերներին ցանքսային տարածությունների կրծատման համար: 1934 թվի ՀԱՄ նահանգների կառավարությունը նախատեսնում ե բամբակի ցանքսային տարածությունների կրծատում—40%, 1935 թ.—25%: Այդ բոլորը կատարվում ե այն ժամանակ, յերբ կապիտալիստական յերկրներում գործազրկների բազմազատել-

— 12 —

վող բանակը մատնված ե քաղցի, յերբ գյուղացիության աշխատավոր մասսաների գրությունը տարեցարի կատարությամբ է:

8. Ճգնաժամի յերկարածվող բնույթը բերեց նաև կապիտալիստական յերկրների վայրուտային ուժեղ արժեքազրկմանը: Ճգնաժամի ազդեցության տակ մի շարք յերկրներ ստիպված ելին հրաժարվել վոսկու ստանդարտից, այսինքն դադարեցնել թղթադրամի փոխանակումը վոսկով: Դրանց են վերաբերվում այնպիսի յերկրներ, ինչպես ՀԱՄ նահանգները, Անդիւան, Ճապոնիան և այլն:

1933 թվի վերջում ընդամենը կար 4 պետություն, վորտեղ գործում եր վոսկու ստանդարտը, վորտեղ թրղթադրամներն ըստ ցանկության փոխանակվում ելին համապատասխան չափով վոսկու հետ, (Ֆրանսիա, Շվեյցարիա, Հոլլանդիա, Բելգիա) դրա հետևանքով կատարվում եր վայրուտային ուժեղ արժեքազրկումը: Ճապոնիայում ինը վոսկու պարփակությունը հանդեպ կազմում է 63%, ՀԱՄ գոլլարը—40%, Ավստրիայում՝ շինդը—22% և այլն: Լոնդոնում 1933 թվի վերջում վոսկու գինը ավելացավ 1,5 անգամ համեմատած 1929 թվի գոյություն ունեցող գնի հետ, Նյու-Յորքում այդ ժամանակում—ավելի քան 1,5 անգամ (164,6%):

Կապիտալիստական յերկրների արդյունաբերողները և ֆինանսիստներն ել ավելի յեն հրում իրենց կառավարությունները դեպի ուղիղ ինֆլյացիայի ճանապարհ—թղթադրամի արժեքազրկումը: Համաշխարհային պատերազմի և հետ պատերազմից յան շրջանի փորձը ցույց է տալիս, վոր կապիտալիստների համար շատ շահավետ է ինֆլյացիայի քաղաքականությունը, վորովհետեւ փողի կատարությունի արժեքազրկումից առաջացող ամբողջ ժանրությունն ընկնում ե բանվոր պատակարգի և աշխատավոր գյուղացիության ուսերքի վրա: Արդեն այժմ, ինչպես նշել ե ընկ. Ստալինը կուսակցության 17-րդ համագումարում՝

«Կապիտալիզմին հաջողվեց փոքր ինչ թեթևացնել

— 13 —

արդյունաբերության գրությունն ի հաշիվ բանվորների՝ նրանց աշխատանքի ինտենսիվությունն ուժեղացնելու միջոցով, նրանց շահագործումը խորացնելով. ի հաշիվ ֆերմերների՝ նրանց աշխատանքի պրոդուկտների, պարենի և մասամբ հումքի նկատմամբ ամենից ցածր գների քաղաքականություն կիրառելու միջոցով, գանդութերի և տնտեսավես քույլ յերկրների գյուղացիների հաշվին՝ նրանց աշխատանքի պրոդուկտների, գրտիավորապես հումքի և ապա պարենի գներն ել ավելի ցածրացնելու միջոցով»:

Ճգնաժամը կապիտալիստական յերկրների բանվորներին հասցրեց անելանելի կարիքի և հուսահատության, գյուղացիների չունենող խավերին մասսայական քայլայման, մանավանդ գաղութային յերկրներում:

Ավտորիայում գործազրկության, աղքատության, բանվորական ընտանիքներում յերեխաների մահացության աճը, սովոր և սիստեմատիկ չննվելն ու սոցիալ-ֆաշիստների դավաճանությունը մինչ հուսահատության հասցըրին բանվոր դասակարգին:

Սովային արշավանքներն Ամերիկայում և Անգլիայում վկայում են բանվոր դասակարգի ծանր գրության ժամանելու յերկրներում: Գերմանիայում Փաշխտական գիտատուրայի սովի բեժիմի գեմ բանվորների անբավականության չնչին արտահայտությունը ճնշվում է դաշտանացած Փաշիզմի կողմից, վորոնք Գերմանիան գարձրել են կոնցենտրացիոն ճանրար ամբողջ աշխատավորության համար: Դրանով և բացատրվում է մոտ ժամանակներում Յեփրոպայի կենտրոնում ավտորիական բանվորների կողմից անցկացված կապիտալիզմի գեմ հերոսական գրոհը: Կապիտալիստական յերկրներում, ինչպես այդ իր ամբողջ հեռատեսությամբ նախատեսել եր ընկ. Ստալինը՝

«Ժողովրդական մասսաները դեռ ևս այնտեղը չեն հասել, վորպեսզի կապիտալիզմի գեմ գրոհի գնան, բայց չոր գրոհի գաղափարը հասունանում է մասսաների գի-

— 14 —

տակցության մեջ—սրանում հազիվ թե կարող ե կասկած լինել»: (Համ. Կ(բ)Կ 17-րդ համագումարի հաշվետուգեկությունը):

Կապիտալիստական յերկրների բանվոր դասակարգը հակառակ բուրժուազիայի, վորը ճգնաժամի յեւը փնտրում է պատերազմի մեջ, ծանր ճգնաժամից դուրս գալու համար գնում և հեղափոխական ճանապարհով, Խորհրդային Միության բանվորների և գյուղացիների ճանապարհով:

3. ԿԱՌՈՒՑԵՆՔ ԱՆԴԱՍԱԿԱՐԳ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԻԶԱՑՆԵՐՈՎ ՅԵՎ ՌԻՃԵՐՈՎ

9. Համ. Կ(բ)Կ 17-րդ համագումարը հաստատեց ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության զարգացման 2-րդ հնդամյա պլանը (1933—1937 թ. թ.): 2-րդ հնդամյակի պլանի հաջող իրականացումն ըստ համագումարի ցուցմունքի ապահովում ե՝ «ա) կապիտալիստական տարրերի և ընդհանրապես դասակարգերի վերացումը, գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման լիակատար ավարտման ու տնայնագործների կողպերացման հիման վրա, արտադրության միջոցների մասնավոր սեփականության վերջնական վերացումը: Խորհրդային Միության եկոնոմիկայի բազմատնտեսաձեռնության վերացումը և արտադրության սոցիալիստական յեղանակի հաստատումը՝ վորպես արտադրության միակ յեղանակ, յերկրի վողջ աշխատավոր բնակչությանը դարձնելով անդասակարգ սոցիալիստական հասարակության ակտիվ ու գիտակեց կառուցողներ:

բ) ԽՍՀՄ վողջ ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման ավարտումն, առաջին հընդամյակում տեղծված և հետագա արագ վերելքի ճանապարհով ընթացող արտադրության միջոցներ արտադրող արդյունաբերության (ծանր արդյունաբերության) հիման վրա:

— 15 —

գ) Բանվորական և գյուղացիական մասսաների բարեկեցության ել ավելի արագ վերելքը, միաժամանակ վողջ բնակարանային և կոմունալ գործի վճռական բարելավումը ԽՍՀՄ-ում:

դ) Պրոլետարական դիկտատուրայի տնտեսական ու քաղաքական դիրքերի ամրացումը՝ բանվոր գասակարդի և գյուղացիության զաշինքի հիման վրա, կապիտալիստական տարրերի և ընդհանրապես դասակարգերի վերջնական լիկվիդացիայի համար:

յ) Յերկրի պաշտպանունակության հետագա ամրացումը»:

(Համ. Կ(բ)Կ 17-րդ համագումարի բանաձեռից ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության զարգացման 2-րդ հնդամյա պլանի մասին):

Յերկրորդ հնդամյակի այլ կարեռագույն քաղաքական և տնտեսական խնդիրները յելնում են այն հսկայական հաջողություններից, վորպիսիք ձեռք ե բերել բանվոր դասակարգն առաջին հնդամյակում՝ կոմունիստական կուսակցության դեկավարությամբ:

Յերկրորդ հնդամյակի վերջում արդյունաբերության արտադրանքը կավեցանա 1932 թվի հանդեպ 2,1 անդամ, և 1913 թվի հանդեպ—8 անդամ. թեթև արդյունաբերության արտադրանքը պետք ե աճի—3 անդամ, սննդային արդյունաբերությունը—2,8 անդամ։ Լայն սպառման ապրանքների արտադրությունն ըստ ամբողջ ժողովրդական տնտեսության աճում է 2,7 անդամ—կիստարվի ապրանքաշրջանառության յեռապատկում։ Գյուղանգեսության արտադրանքը պետք ե կրկնապատկվի, ստեղծվելու յեն արդյունաբերության նոր շրջաններ, ինդուստրիայի նոր գիգանտներ, նոր քաղաքներ, կառուցվելու և շահագործման են հանձնվելու 64 միլիոն քառ. մետր բնակելի տարածություն, վորը կազմում ե տասնյակ տարիների ընթացքում կուտակված բնականային ամբողջ քաղաքային Փոնդի  $\frac{1}{3}$ -ը՝ «Մոսկվայում պետք ե կառուցվի 4,5 միլիոն քառ.

— 16 —

2874 1006

28670

մետր, Լենինգրադում 2,7 միլիոն, քառ. մետր, Խարկովում—1,15 միլիոն, Ստալինգրադում—1,2 միլիոն, Գորկում—1,3 միլիոն, Նովոչերկասկում—800 հազար և այլն։


Ուրալո-Կուզնեցսկի կոմբինատի շրջաններում պետք ե կառուցվի 13 միլիոն քառ. մետր։ Քարածխային արդյունաբերության մեջ բնակ Փոնդն աճում է 2 անդամ, սև մետալուրգիայում՝ 3,5 անդամ, մեքենաշինարարությունում՝ 5,2 անդամ» (Վ. Կուլյափել։ Համ Կ(բ)Կ-ի 17-րդ համագումարի գեկուցումը):

Քաղաքի և գյուղի սոցիալիստական տնտեսության մեջ արտադրողական ուժերի աճումը, քաղաքի և գյուղի աշխատավորության նյութական և կուլտուրական բարեկեցության խոշոր աճումն հնարավորություն է տալիս հաջող կերպով 2-րդ հնդամյակում լուծել քաղաքի և գյուղի միջև յեղած դարեր շարունակվող հակագրության վերացման կարեռագույն խնդիրը, բարձրացնել սոցիալիստական գյուղի զարգացման մակարդակը մինչ սոցիալիստական քաղաքի զարգացման մակարդակին։

Նոր տեխնիկայի յուրացման գործում բանվոր դասակարդի հաջողությունների հիման վրա ամբողջ 2-րդ հնդամյակում նախատեսնված է աշխատանքի արտադրության աճում արդյունաբերության մեջ—63 % առաջին հնդամյակի—41 %-ի փոխարեն, ինքնարժեքի իջեցում—26 %։ Ուշադրության կենտրոնում դրվում է պայքարը վորակի և արտադրանքի ասորտիմենտի լավացման համար ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում։

10. 2-րդ հնդամյակի պլանի կատարումը կամացի խոշոր միջոցներ։ Յեթե առաջին հնդամյակի կատարման համար անհրաժեշտ եր 120 միլիարդ ռուբլի, գրանից 50,5 միլիարդ ռուբլի կապիտալ ներդրումներ, ապա 2-րդ հնդամյակի պլանի համար կազմանջվի մոտ 400 միլիարդ ռուբլի—133,4 միլիարդ ռուբլի կապիտալ ներդրումներով։

— 17 —



ՀԱՅԱ - ԸՆԴՀԱ

ՀԱՅԱ - ԸՆԴՀԱ

Այդ խոշոր միջացները, վորոնց չափի մասին անգամ չեն կարող մտածել առաջավոր կապիտալիստական յերկրները, հանդիսանում են միանգամայն ունալ պրոլետարական դիկտատուրայի յերկրի համար, վորն իրականացնում ե անդասակարգ սոցիալիստական հասարակության պլանային շինարարության հսկա պրոցեսը:

2-րդ հնգամյա պլանի Փինանսավորման համար անհրաժեշտ միջացների հսկայական մասն ստացվելու յեժողովրդական անտեսության համայնացված սեկտորից, (արդյունաբերություն, տրանսպորտ, խորհրդատեսություններ և այլն):

Այդ նշանակում ե, վոր նոր տեխնիկայի հաջող յուրացմամբ բանվոր դասակարգի և կոլտնտեսական գյուղացիության կողմից նոր հսկայական արտադրական ուժերի տիրապետմամբ, վորոնք ստեղծվել են առաջին հնգամյակի ժամանակաշրջանում և ստեղծվում են յերկրորդ հնգամյակում, մեր յերկրի բանվոր դասակարգի առաջ բացվում են ըստ չափի գեռ չտեսնված սոցիալիստական կուտակման աղբյուրներ աշխատավորության նյութական բարեկեցության խոշոր աճման պայմաններում: Միայն պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում հնարավոր ե կուտակման, սպառման աճման հաջող զարգացումը և ժողովրդական անտեսության համար անհրաժեշտ ռեզերվների ստեղծումը: Այդ վառ կերպով պատկերացնում ե ժողովրդական յեկամտիկառուցյածքը, վորպիսին նախատեսնվում ե յերկրորդ հնգամյակում:

Կուտակմամբ և սպառումը  
ժողովրդական յեկամտիկան

Տեսակարաբ կշիռ (առկուներով  
ամբողջ ժողովրդական յեկամտիկան)

(1932 թվի դներով  
և տոկոսներ

1932 թ. 1937 թ.

1932 թ. 1937 թ.

ա) կուտակում	100,0	180,1	ա) կուտակում	24,5	18,7
բ) սպառում	100,0	257,6	բ) սպառում	72,8	79,5
ընդունակում	100,0	160,9			

— 18 —

ՀՅԱ

Այսպիսով ժողովրդական յեկամտիկ մեջ սպառման տեմպերի արագ աճումը և սպառման մասի ավելացումը մինչև 79,5 %-ի 1937 թվին, մի ավելորդ անգամ ևս հաստատում են ընկ. Ստալինի խոսքերն այն մասին, վոր «Սոցիալիզմը կարելի յեկամուցել միմիայն հասարակության արտադրողական ուժերի բուռն աճման, մթերքների և ասլրանքների առատության, աշխատավորության ունեոր կյանքի կուլտուրականության բուռն աճման հիման վրա: Վորովչետե սոցիալիզմը, մարքսիստական սոցիալիզմը նշանակում է վոչ թե անձնական պահանջմունքների կրծատում, այլ նրանց ըստամենայնի ընդարձակում և ծաղկում, վոչ թե այդ պահանջները բարձացած աշխատավոր մարդկանց բորոք պահանջմունքների համակողմանի և լիակատար բավարարում» (Համ Կ(թ)Կ 17-րդ համագումարի հաշվետու գեկուցումը):

2-րդ հնգամյակին ինչպես առաջինը, պետք ե հաջողությամբ ավարտվի ի հաշիվ սեփական սոցիալիստական կուտակումների իրեն՝ պրոլետարական սեփական հաշվին:

Ժողովրդական տնտեսության զարգացման 2-րդ հնգամյա պլանի համաշխարհային պատմական խընդիրների կատարումը պահանջում է տնտեսական հաշվառքի հետազա արմատացումն ու ամրացումը տնտեսական գործունեյության բոլոր բնագավառներում, պետական միջացների ծախսման եկոնոմիկայի խիստ ուժիմը և խորհրդային ոռոբլու ըստամենայնի ամրացումը:

Կոմունիստական կուտակցությունն ընկ. Ստալինի անմիջական դեկալիական պահանջման դաշտավարությամբ տարավ վճռական պայքար առանձին կոմունիստների ձախլիկ մանր-բուրժուական փորձերի դեմ՝ տապալել ուրբլու ամրացման և ապրանքաշրջանառության ծավալման քաղաքականությունը մեր յերկրում: Վճռական պայքարն առանձին կոմունիստների այդ փորձերի դեմ տարվեց նրա համար,

— 19 —

վոր նրանք՝ «Զեն հասկանում, վոր փողը մեզ մոտ գեռ յերկար կմնա՝ ընդհուպ մինչև կոմունիզմի առաջին ստադիայի ավարտումը— մինչև զարգացման սոցիալիստական ստադիայի ավարտումը։ Նրանք չեն հասկանում, վոր փողը բուրժուական եկոնոմիկայի այն գործիքն ե, վոր խորհրդային իշխանությունն իր ձեռքն ե վերցրել և հարմարեցրել սոցիալիզմի շահերին, վորպեսզի թափով ծավալի խորհրդային առեւտուրը և դրանով իսկ նախապատրաստի պայմաններ ուղղակի մթերափոխության համար» (Ստալին, Համ կ(բ)կ 17-րդ համագումարի հաշվետու զեկուցում)։

Յերկրորդ հնդամյա պլանի հաջող Փինանսավորումը, պայքարը՝ ունալ աշխատավարձի անընդհատ բարձրացման, քաղաքի և գյուղի միջև տնտեսական կապերն ամրացնելու համար հնարավոր չե, առանց վճռական պայքարի մեր ոռություն հետագա ամրացման համար։ Այդ կապակցությամբ ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 2-րդ հնդամյա պլանի զարգացման մասին Համ կ(բ)կ 17-րդ համագումարի վորոշումներում նշված ե՝ «համագումարն ընդգծում ե, վոր տրնտեսական գործունեյության հիմք պետք ե հանդիսանան պայքարը ժողովրդական տնտեսության բոլոր ողակներում տնտեսաշվառքն արմատացնելու համար, պյանային ֆինանսական կարգավահությունն ամրացնելու, խորհրդագյին ոռություն տնտեսաշվառքն ուժեղացնելու այդ կարևորագույն լծակի՝ հետագա ամրացման և քաղաքի ու գյուղի միջև գոյություն ունեցող տնտեսական կապերի ամրացման համար»։

#### 4. ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅՅԱԿԻ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆԸ (Յերկրորդ տարվա բաժին)

Խորհուրդների յերկիրը բանվորներից և բանվորուհիներից, կոլտնտեսականներից և կոլտնտեսուհիներից, հարվածայիններից և հարվածայնուհիներից պահանջում և մաքսիմալ պայքար նոր ձեռնարկությունների և

— 20 —

նոր տեխնիկայի հետագա յուրացման; աշխատանքի արտադրողականության հետագա բարձրացման, արտադրանքի վորակի լավացման և ինքնարժեքի իջեցման համար։ Այս խնդիրների իրականցումը կապահովի հաջող պայքարն ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ սոցիալիստական կուտակման աղբյուրների հետագա լավացման համար։ 1934 թիվը, յերկրորդ հնդամյակի յերկրորդ տարին հանդիսանում ե ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության հետագա զարգացման, հետագա վերելքի տարին Համ կ(բ)կ 17-րդ համագումարի կողմից ընդունված ժողովրդական տնտեսության զարգացման 2-րդ հնդամյա պլանի հիման վրա։ 1934 թվին կուտակցությունը և բանվոր դասակարգը պետք ե վճռական պայքար տանեն ձեռնարկություններում, կոլտնտեսություններում և խորհուրդներում պլանների վրակական և քանակական ցուցանիշների կատարման, ապրանքաշրջանառության հետագա ծավալման, տրանսպորտի հետամնացության վերացման, անասնապահության հզոր զարգացման համար։ Այս տարի մենք պայքարում ենք արդյունաբերության բնագավառում։

Ամբողջ արդյունաբերության ընդհանուր արտադրանքի աճման 19 %-ի համար, այդ թվում արտադրության միջոցներ արտադրող արդյունաբերության զծով, — 21,7 % լայն սպառման առարկաների արտադրության 18,8 տոկոսով ավելացնելու համար, անտառային արդյունաբերության աճի 18 %-ի համար՝ 1933 թվի համեմատությամբ։

Ամբողջ ժողովրդական տնտեսության կապիտալ շինարարության 25,1 միլիարդ ոռություն ծրագրի կատարման համար— 1933 թվի 18 միլիարդ ոռություն փոխարեն։

10 միլիոն տոնն թուղի, 9,8 միլիոն տոնն պողպատի և 7 միլիոն տոնն պրոկատի ձուլման համար։

12 նոր հալոցների, 40 մարտենների, 25 պրոկատոնի ստանների և 3 բլյումինդների շահագործման համար։

— 21 —

19 միլիարդ կիլովատ ժամ ելեկտրոներգիա արտադրելու, 96, 25 միլիոն տոնն քարածութիւն հանելու, 39 նոր քարածութային շախտ բացթողներու համար:

30, 6 միլիոն տոնն նավթ ստանակու և բենզին արտադրելու համար—13 նոր կրեկինդներ շարք մտցնելու համար:

Յերկաթուղային տրանսպորտում որական միջին թվով 68 հազար վագոն բառնալու և յերկաթուղային տրանսպորտի կատարակ շինարարության 3,365 միլիոն ոռություն պլանի կատարման համար 1933 թվի 2,865 միլիոն ոռություն փոխարեն: Արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականությունը 13,5 %-ով բարձրացնելու, արդյունաբերության մեջ ինքնարժեքը 4,7 %-ով իջեցնելու համար 1933 թվի միջին տարեկան մակարդակի հանդեպ: Ինքնարժեքի իջեցման յուրաքանչյուր տոկոսը (արդյունաբերության մեջ) 1934 թվին տալիս է 260 միլիոն ոռությունի տնտեսում:

Մաքուր շինարարության ինքնարժեքը 15 %-ով իջեցնելու համար յուրաքանչյուր տոկոսը տալիս է 165 միլիոն ոռություն ավելի տնտեսում:

Գյուղատնտեսության բնագավառում մենք պայքարում ենք՝ բերքատվության բարձրացման համար՝

Հատ հացանատիկալին բույսերի	13,9 տոկոս
» Բամբակի	12,
» Վուշի	10,6
» Շաքարի ճակնդեղի	28,3
» Արևածաղկի	12,7
» Գետնախնձորի	14,8

Հինգ տարվա միջին բերքի համեմատությամբ: 540 նոր ՄՏԿ-ների կառուցման և կոլտնտեսությունների  $\frac{2}{3}$  մասն ամբողջ ՄՏԿ-ների սպասարկման մեջ ընդդրկելու համար: Կուլտուրական շինարարության ծրագիրը 13,7 միլիարդ ոռություն չափով կատարելու համար, 1933 թվի 11,7 միլիարդ ոռությունի փոխարեն, այդ թվում լուսավորության գծով 8,3 միլիարդ ոռությունի առող-

Պետական բյուջեյի ըստ յեկամուտների 48,88 միլիարդ ոռությունի և ծախսերի 47,3 միլիարդ ոռությունի կատարման համար, ստեղծելով պետական ռեզերվ 1,5 միլիարդ ոռություն ավելի:

Մեր պլանների լրիվ կատարման պայքարի հզոր դործիքներից մեջ հանդիսանում են մեր մասսայական պրոլետարական փոխառությունները: «Յերկրորդ հընդամյակի փոխառությունն» (յերկրորդ տարվա բաժին) ուղղված և յերկրորդ հնդամյակի յերկրորդ տարվա պլանի հաջող կատարումն ապահովելու համար:

12. Մեր խորհրդային փոխառությունների ունեն յերկյակ նշանակություն: Յուրաքանչյուր բանվորի, կոլտնտեսականի, յուրաքանչյուր աշխատավոր կնոջ մասնակցությունը խորհրդային փոխառություններում ակտիվորեն ողնում և պետությանն իրականացնելու սոցիալիզմի շինարարության մեջ պլանները, վորովհետև մեր փոխառություններից ստացված փողերն ամբողջությամբ ոգտագործվում են մեր յերկրի ինքուստրացման համար: Բայց խորհրդային փոխառությունները ներկայացնում են մեծ ոգուաներ պարտատոմսատերերի համար: Միլիոնավոր աշխատավորներ առաջին հնդամյակի և յերկրորդ հնդամյակի առաջին տարվա ժամանակակիցներում ստացել են փոխառություններից՝ շահումների, տոկոսների և վիճակահանված պարտատոմսերի ժամանակով 1,4 միլիարդ ոռությունի:

1934 թվին ըստ մեր փոխառությունների վճարվելու յեն շահումներ և տոկոսներ 812 միլիոն ոռությունի: Խորհրդային փոխառությունները բաց են թողնված 10 տարի ժամանակով և արդեն 2-րդ հնդամյակի ընթացքում խորհրդային պետությունը պետք է սկսի փոխառությունների մի մասի մարտումը, վորոնք բաց են թողնըի 1927—28 թվերում:

Առաջին հնդամյակի ընթացքում 40 միլիոն աշխատավորություն ակտիվ մասնակցություն ունեցան սոցիալիստական շինարարության ֆինանսավորման գործում մեր փոխառությունների միջոցով։ Այդ 40 միլիոն աշխատավորությունը փոխառություններով տվեց պետությանը մոտ 6 միլիարդ ռուբլի։ Ազգաբնակչության դրամական միջոցների մորիլիքացիայի կարգով պետությունը ներդրավեց 21,5 միլիարդ ռուբլի։

Ազգաբնակչության առանձին խմբերի մասնակցությունը մեր մասսայական պետական փոխառություններում, ընօրոշվում է հետևյալ թվերով (միլիոն ռուբլիներով)։

	Ինդամյական 1-ին դրամական թիվում	Ինդամյական 2-րդ դրամական թիվում	Ինդամյական 3-րդ դրամական թիվում	Հնդամյակը չորս տարում
	5-րդ առաջ դրամական թիվում	6-րդ առաջ դրամական թիվում	7-րդ առաջ դրամական թիվում	
Բանվոր ծառայողն.	113	408,0	591,0	719,6 1382,9 1935,9 2228,2
Գյուղացիներ	10	44,4	181,0	265,4 450,2 639,8 826,1
Այլ ազգաբնակչության . . . .	77	46,4	57,0	40,1 101,1 133,3 160,2
Հնդամյակը	200	498,8	829,0	1026,1 1934,2 2709,0 3214,5

Բանվորների և ծառայողների մասնակցությունը բոլոր փոխառություններում անընդհատ աճում է, դա և բնորոշում է բանվոր դասակարգի աճող քաղաքական ակտիվությունը։ Գյուղում միմիայն 1932—33 թվից ե նկատվում չմեծ բեկում գյուղական մասսաների մասնակցության գծով մեր փոխառություններում։

Այդ բեկումը կապված է կոլեկտիվացման բուռն աճման և կոլտնտեսական գյուղացիության գյուղում խորհրդային իշխանության հիմնական հենարանը դառնալու հետ։

Այդ բեկումը բղխում է ընկ. Ստալինի լոգունդի համար։

— 24 —

Հող իրականացումից—դարձնել բոլոր կոլտնտեսականներին ունեոր, իսկ կոլտնտեսությունները բոլչեիկական։ Կոլտնտեսականների և կոլտնտեսուհիների ակտիվության շարունակվող աճումը ել ավելի կրաքարցնի նրանց մասնակցությունը մեր փոխառությունների մեջ։

Խորհրդային կառավարությունը խոշոր միջոցներ և բաց թողնում գյուղում սովորացին և կոլխոզային կարգերն ամրացնելու և զարգացնելու համար։ 1933 թվին պետությունը բաց ե թողել ըստ բյուջետային հատկացումների 3,5 միլիարդ ռուբլի։ 1934 թվին ըստ պետական բյուջեյի նախագծված և 5,8 միլիարդ ռուբլի սոցիալիստական հողագործությանն ողնելու համար, դրանցից կոլտնտեսական շինարարության և ԽՍՀՄ Հողժողկոմատի միջոցառումների համար 3,9 միլիարդ ռուբլի։ Խորհրդային կառավարության այս միջոցառումները պետք ե ոժանդակեն կոլտնտեսությունների բերքի բարձրացման ու անասնապահության զարգացման բնագավառում ընկ. Ստալինի ցուցմունքների իրականացնելու այն մասին, վոր՝

«Անասնապահության գործը պետք է իրենց ձեռքն առնեն ամրող կուսակցությունը, մեր բոլոր աշխատողները՝ կուսակցականները և անկուսակցականները, նկատի ունենալով, վոր անասնապահության պրոբլեմն այժմ նույնպիսի առաջնահերթ պրոբլեմ է, վորպիսին եր յերեկ՝ արգեն հաջողությամբ զուծված հացահատիկի պրոբլեմ»։

(Համ կ(բ)կ 17-րդ համարումարի հաշվետու զեկուցում)։

13. Բանվոր դասակարգի նախաձեռնությամբ ծնված մասայական պրոլետարական փոխառություններն աշխատավոր գյուղացիների առաջավոր շերտերի ակտիվ ոժանդակությամբ ամեն տարի իրացվում են քաղաքի և գյուղի աշխատավոր մասսաների արտադրական և քաղաքական խոշոր ակտիվության պայմաններում։ Սակայն անցյալ փոխառությունների իրացման փորձը ցույց է տալիս, վոր մի շարք տեղերում

— 25 —

Քինանսական մարմինները և պետվարկին ու խնայգործին ու ուղարկող հանձնաժողովները չեն ամբացնում մասսաների այդ ամբողջ ակտիվությունը։ Այդ կազմակերպություններից շատերը փոխառությունները համարում են կարճատև կամպանիա, վորպիսին հաշված է աշխատավորությանը միայն փոխառությունների բաժնեգրության գլխութին ընդգրկելու մեջ։ Դրա հետեւանքով մի շարք տեղերում՝ ձեռնարկություններում, կոլտնտեսություններում նկատվում եր ճեղքվածք բաժնեգրության գումարների և փաստորեն ստացվող մուծումների մեջ։

Ուժանդակող հանձնաժողովներն ու խնայգրամարկըները չեն զբաղվում ձեռնարկություններում բաժնեգրությունն անկացնելուց հետո նոր աշխատանքի ընդունված բանվորներին և նմանապես կամպանիայի ժամանակ բաժնեգրությունից գուրս մնացած կոլտնտեսականներին գյուղում լրացուցիչ ընդգրկումով։

«Զպետք ե լինի փոխառությանը չբաժնեգրված վոչ մի աշխատավոր քաղաքում, վոչ մի կոլտնտեսական և կոլտնտեսուհի» լոգունդը պետք ե և կարող ե հաջողությամբ իրականացվել վոչ միայն փոխառության բաժնեգրության ժամանակ, այլև աշխատավորության կողմից մինչև բաժնեգրության գումարի լրիվ վերջնական վճարումը։

Ձեռնարկությունների, կոլտնտեսությունների և խորհանգեսությունների ուժանդակողովները խնայգական դրամարկղների աշխատակիցները հարգածայինների և հարգածայնուհիների ակտիվ ուժանդակությամբ պետք ե սիստեմատիկ աշխատանք տանեն հաշվի առնելու բաժնեգրությամբ ընդգրկված աշխատավորությանը, վորպեսդի փոխառության բաժնեգրության ժամանակ մասսաների ծավալված ակտիվությունն ոգտագործվի աշխատավորությանը փոխառության մեջ ընդգրկելու 100 %-ով և ժամանակին ու լրիվ վճարելու այդ բաժնեգրության գումարները։

— 26 —

Փոխառությանը բաժնեգրված բանվորները և ծառայողները փոխադրվելով այլ ձեռնարկություններ և աշխատանքի ուրիշ վայրեր պետք ե ակտիվություն շուցաբերեն նոր տեղում իրենց բաժնեգրությունը ձեռներպելու դործում և այդպիսով մնան խորհրդային փոխառությունների ակտիվ մասնակցողների շարքերում։

Միլիոնավոր բանվորներ և ծառայողներ հաշվի առնելով սոցիալիստական շինարարության ֆինանսավորման համար մեր փոխառությունների հոկայական նշանակությունը, բաժանորդագրվեցին 1933 թվին «Հարցնագամյակի փոխառությանը» (առաջին տարիա բաժին) ավելի քան յերեք շաբաթվա աշխատավարձի շափով։ Խորհրդային Միության ձեռնարկությունների մեծամասնությունն իրացրել է 1933 թվի փոխառությունը յերեք շաբաթվա աշխատավարձի փոնդից ավելի։

Սակայն 1933 թվի փոխառության իրացման մեծ թերությունը յեղել է այն, վոր առանձին հասարակական կազմակերպությունները և տեղերի Փինմարմինները ծավալված կազմակերպչական մասսայական աշխատանքի հիման վրա փոխանակ ապահովելու աշխատավորության 100%-յա ընդգրկումը փոխառության բաժնեգրության մեջ, փոխառության բաժնեգրությունը կատարել են բանվորների և ծառայողների միայն մի մասի մեջ, ի հաշվի նրանց մեկ ամսից ավելի աշխատավարձի չափով բաժնեգրության։

Փոխառության իրացման գծով մեծ աշխատանքներ տանող ուժանդակող հանձնաժողովները, պրոֆմիութենական կազմակերպությունները հենվելով բանվորների, կոլտնտեսականների և աշխատավորության լայն ակտիվության վրա, պետք ե ձգտեն կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ դլիսովին ընդգրկելու աշխատավորությանը նոր փոխառության բաժնեգրության մեջ, վճարականորեն պայքարելով բաժնեգրության կամավոր սկզբունքը կոպիտ վարչարարությամբ փոխարինելու բոլոր տեսակի փորձերի ղեմ։

14. «Յերկրորդ հնդամյակի փոխառության» (յերկ-

— 27 —

բորդ տարվա բաժին) կամպանիան տարվում ե խոչոք հաղթանակների պայմաններում, վորպիսին ձեռք ե բերել կուսակցությունն և բանվոր դասակարգը սոցիալիզմի շինարարության բոլոր ֆրոնտներում, այն պայմաններում, յերբ այդ հաջողությունները կատաղություն և ատելություն են առաջացնում դասակարգային թշնամու մեջ:

Կասկածից դուրս ե, վոր դասակարգային թշնամիները փորձեր կանեն զցելու մեր փոխառությունների հեղինակությունը, վորոնք ոգտվում են խոչոր վաստակությամբ աշխատավորության մեջ: Մեր թշնամիների այդ դասակարգային թշնամական ագիտացիան մերկացնելը յուրաքանչյուր բանվորի, կոլտնտեսականի, յուրաքանչյուր բանվորուհու և կոլտնտեսուհու առաջնակարգ խնդիրն ե: «Յերկրորդ հնդամյակի փոխառության» (յերկրորդ տարվա բաժին) իրացման հաջող կատարումով խորտակիչ հարված հասցնենք դասակարգային թշնամուն, ուժեղացնենք ԽՍՀՄ-ի տնտեսական անկախությունը և ամրացնենք մեր յերկրի պաշտպանությունը:

### Հավելված

#### «ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՑԱԿԻ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ»

(Յերկրորդ տարվա բաժին)

Նոր փոխառության մեջ ամբողջովին կրկնված են յերկրորդ հնդամյակի փոխառության» առաջին տարվա բաժնի պայմանները: Այդ արված ե նրա համար, վոր «յերկրորդ հնդամյակի փոխառության» առաջին բաժնին իր պայմաններով համապատասխանում ե աշխատավորական լայն մասսաների պահանջներին և ցանկություններին:

Աշխատավոր մասսաներին փոխառության արդեն ծանոթ պայմանների կրկնողությունը հեշտացնում է պարտատոմսերի կառավարումը:

Փոխառության ժամկետն ու գումարը

«ՅԵՐԿՐՈՐԴ հնդամյակի փոխառությունը» (յեր-

— 28 —

կրորդ տարվա բաժին) բաց ե թողնված 3,500 միլիոն ռուբլի գումարով: Փոխառության առաջին բաժինը բաց եր թողված 3,200 միլիոն ռուբլի գումարով: Փոխառության գումարի ավելացումը համեմատած 1933 թվի հետ, համապատասխանում ե բանվորների և ծառայուների աշխատավարձի ֆոնդի աճմանը, կոլտնտեսական գյուղացիության յեկամտի աճմանը:

Նոր փոխառության ժամկետը 10 տարի յե, սկսած 1934 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1944 թվի հոկտեմբերի 1-ը: Այսպիսով նոր փոխառության բաց թողման և լրիվ հետզնման ժամկետները սահմանված են փոխառության առաջին բաժնից մեկ տարի ուշ:

Փոխառության պայմանները

Նոր փոխառությունն ունի յերկու մասեր՝ տոկոսաբեր մաս և անտոկոսաբեր— անպայման շահող մաս:

Բառ տոկոսաբեր մասի պարտատոմսերի, պարտատոմսատերերն ստանում են ամբողջ յեկամուտը կուպոնների ռուկոսներով, տարեկան 10 %: Կուպոնները վճարվում են ամեն տարի սկսած 1935 թվի հոկտեմբերի մեկից: Տոկոսաբեր մասի պարտատոմսերով շահումների վիճակահանություններ տեղի չեն ունենում:

Անպայման շահող մասի պարտատոմսատերերն ամբողջ յեկամուտն ստանում են շահումներով: Անպայման շահող յուրաքանչյուր պարտատոմս տաս տարվանիցում անպայման շահում ե:

Փոխառության պարտատոմսերը բաց են թողնված յուրաքանչյուրը 100 ռուբլու արժողությամբ:

Բացի անպայման շահող մասի 100 ռուբլիանոց ամբողջական պարտատոմսից բաց են թողնված նույնպես 50, 25, 10 և 5 ռուբլանոց պարտատոմսեր, վորոնք հանդիսանում են ամբողջական պարտատոմսի մասերը: Հինգ ռուբլիանոց պարտատոմսերը բաց են թողնված մանր հաշվարկներ կատարելու համար:

Փոխառության յուրաքանչյուր մասը (տոկոսաբեր և անպայման շահող) բաժանվում ե կարգերի, ունենալով յուրաքանչյուր կարգում 100 միլիոն ռուբլի: Կարգերը

— 29 —

բաժանվում են սերիաների: Անպայման շահող մասի յուրաքանչյուր կարգն ունի 20 հազար սերիաներ, յուրաքանչյուր սերիայում 50 հատ հարյուր ոռութիւնոց պարտատոմսեր: Տոկոսաբեր մասի յուրաքանչյուր կարգում կան 100 հազար սերիաներ, յուրաքանչյուր սերիայում 10 հատ 100 ոռութիւնոց պարտատոմսեր:

Այնքան, վորքան «յերկրորդ հնդամյակի փոխառության» յերկրորդ բաժինը հանդիսանում է առաջին բաժնի շարունակությունն, ապա և յերկրորդ բաժնի պարտատոմսերի համարները (սերիաների համարները) հանդիսանում են առաջին բաժնի համարների շարունակությունը: Նոր՝ անպայման շահող մասի յուրաքանչյուր կարգի սերիաների համարները սահմանված են 20001-ից մինչև 40000 համարը, իսկ նոր տոկոսաբեր մասի՝ 100001-ից մինչև 200000 համարները: Այդ սերիաների պարտատոմսերը կմասնակցեն շահումների վիճակահանություններում (անպայման շահող մասի պարտատոմսերը) և մարման վիճակահանություններում (տոկոսաբեր մասի պարտատոմսերը) փոխառություններում (տոկոսաբեր մասի պարտատոմսերը) փոխառության մաս-մաս վճարումը վերջանալուց հետո:

### ԱՆՊԱՅՄԱՆ ՇԱՀՈՂ ՄԱՍԻ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՇԱՀՈՂՄՆԵՐԸ

Բայ անպայման շահող մասի, 10 տարվա ընթացքում տեղի յեն ունենալու 40 շահումների վիճակահանություններ, յուրաքանչյուր տարում 4 վիճակահանություններով:

Նոր փոխառության շահումների վիճակահանությունները կկատարվեն բաժնեդրության հաշվարկումները վերջանալուց հետո, փոխառության առաջին բաժնի վիճակահանությունների հետ միաժամանակ: Հետեւապես յուրաքանչյուր պարտատոմսատեր կարող է «յերկրորդ հնդամյակի փոխառության» յերկու բաժնի յել իր պարտատոմսերն ստուգել միևնույն աղյուսյակով:

— 30 —

Գետության կողմից փոխարինաբար վերցրած անպայման շահող մասի յուրաքանչյուր բաժնեվող մասի համար 10 տարվա ընթացքում պարտատոմսերով կվճարվի 198 միլիոն ռուբլի:

Յուրաքանչյուր պարտատոմսն կարող է շահել հետեւյալ գումարներից մեկն ու մեկը՝ 3000 ռ. 1000 ռ. 500 ռ. 250 ռ. 200 ռ. և 150 ռ. ներառյալ այդ գումարների մեջ շահող պարտատոմսի արժեքը (100 ռուբ.): Որինակ՝ 500 ռուբլի շահող պարտատոմսատերն ստանում է 400 ռուբլի շահում և 100 ռուբ պարտատոմսի արժեքը:

Պարտատոմսի յուրաքանչյուր բաժնեվող մասի համար վճարվում է շահած գումարի համապատասխան մասը:

Անպայման շահող մասի յուրաքանչյուր 100 միլիոն ռուբլի (մեկ կարգ) այսինքն յուրաքանչյուր 100 ռուբլանոց մեկ միլիոն պարտատոմսերի համար, շահումների քանակն ու գումարը բաշխվում են ըստ տարիների այսպես:

Տարիներ	Շահումների քանակություն						Ընդամենը շահումների գումարը	
	3000 ռուբլի	1000 ռուբլի	500 ռուբլի	250 ռուբլի	200 ռուբլի	100 ռուբլի	Քննականը	Գումարը մասնակիությունը
1-ին	12	160	400	30628	—	—	3 200	8053
2-րդ	12	160	400	30628	—	—	31200	8053
3-րդ	8	120	300	26772	—	—	27200	6987
4-րդ	8	120	300	26772	—	—	27200	6987
5-րդ	8	120	300	26773	—	—	27200	6987
6-րդ	8	120	300	26772	—	—	27200	6987
7-րդ	8	120	300	26772	—	—	27200	6987
8-րդ	8	120	800	26772 120000	120000	267200	48987	48987
9-րդ	8	120	300	26772 120000	120000	267200	48987	48987
10-րդ	8	120	300	26772 120000	120000	267300	48987	48987
Ընդամենը փոխառության ամրող ժամանակաշրջանում	88	1280	3200	275432	360000	360000	1000000	198002

\*) Փոխառության ըրջանառության առաջին տարին հաշվում են 1934 թ. 1 10-ին մինչև 1935 թ. 1 10-ը, յերկրորդ տարին՝ 1935 թ. 1 10-ին մինչև 1936 թ. 1 10-ը և այլն:

— 31 —

Форсажиан շրջանառության առաջին 8 տարում շահող պարտատոմսով կվճարվի 250-ից մինչև 3·000, այսինքն այդ տարիների շահումները կազմում են 150, 400, 900 և 2900 ռուբլի հարյուր ռուբլիանոց պարտատոմսի համար, վորի արժեքը նույնպես վճարվում է շահած գումարի հետ միասին:

Սկսած փոխառության շրջանառության 8-րդ տարվա վերջից, ինչպես և 9-րդ, 10-րդ տարում կկատարվեն շահող պարտատոմսների վճարումը գումարով 200 և 150 ռուբլի (ներառյալ պարտատոմսի արժեքը):

Շահումների և կուպոնների վճարումը

Անպայման շահող մասի պարտատոմսների շահումները վճարվում են խնայդրամարկղներում պաշտոնական աղյուսակներով, վորոնք տպվում են «Известия ЦК СССР и ВЦИК», «Экономическая жизнь», «Крестьянская газета», «Лесная промышленность».

թերթերում և այն շրջադարձկոմի թերթում, վորի տերիտորիայի վրա կատարվում է վիճակահանությունը:

Խնայդրամարկղների կողմից շահումների վճարումն սկսվում է վերոհիշյալ թերթից վորում մեկի այն համարն ստանալուց հետո, վորի մեջ տպված է շահումների պաշտոնական աղյուսակը:

Մինչև 500 ռուբլի շահումները (ներառյալ 500 ռուբլին) վճարվում են բոլոր խնայդրամարկղներում, բացի 2-րդ կարգի գործակալության խնայդրամարկղներից:

1000 ռուբլիանոց շահումներն ամբողջական պարտատոմսով և այդ շահման մասերը կարող են ստացվել միայն շրջանային, կամ քաղաքային խնայդրամարկղներում, ուր պարտատոմսատերը կարող է հանձնել պարտատոմսն անձամբ, կամ ստորին խնայդրամարկղի միջոցով:

3000 ռուբլիանոց շահումներն ամբողջական պարտատոմսերով, կամ այդ շահման մասերը վճարվում են

— 32 —

միայն շահող պարտատոմսների իսկությունը Պետնիշի կողմից նախորոք ստուգելուց հետո: Շահող պարտատոմսն ուղարկվում է ստուգման համար Պետնիշին կամ պարտատոմսատիրոջ կողմից, կամ յուրաքանչյուր խնայդրամարկղի միջոցով:

Այնքան, վորքան շահող պարտատոմսով վճարված գոմարի մեջ մտնում է նաև պարտատոմսի արժեքը, առաջ շահումը վճարելուց հետո պարտատոմսը չի վերադարձվում պարտատոմսատիրոջը, այլ մնում է խնայդրամարկղում:

Տոկոսաբեր մասի պարտատոմսների կուպոնները վճարվում են նրանց ժամկետն հասնելուն պես, բոլոր խնայդրամարկղներում:

Պարտատոմսատերները կարող են շահումներն ու պարտատոմսների կուպոնների արժեքն ստանալ ցանկացած որն սկսած վճարման առաջին որից, բայց վոչ ուշ 1934 թ. հոկտեմբերի մեկից:

Փոխառության հետգնումը (մարումը)

Անպայման շահող մասի բոլոր պարտատոմսները մարվում են նրանց վրա ընկած շահումները վճարելու ժամանակ, վորպիսի գումարի մեջ, ինչպես ասվեց վերեւում, ստանում է նաև պարտատոմսի արժեքը:

Տոկոսաբեր մասի պարտատոմսների մարումն սկսվում է 1940 թվի հոկտեմբերի մեկից: Թե հատկապես տոկոսաբեր մասի վոր պարտատոմսներն են, վոր յենթակա յեն մարման, կվորոշվի մարման հատուկ աղյուսակներով:

Տոկոսաբեր մասի պարտատոմսատիրոջը վճարվում է այն տարվա հոկտեմբերի մեկից, վորում կատարվել է վիճակահանությունը: Սկսած այդ ժամկետից դադարեցվում է տոկոսների բարդումն այն պարտատոմսների վրա, վորոնք գուրս են յեկել մարման վիճակահանությունում:

Մարման վիճակահանության ժամանակ դուրս յե-

— 33 —

կած տոկոսաբեր մասի պարտատոմսերը կարող են ներկայացվել վճարելու համար վիճակահանությունը գուրս գալուց սկսած մինչև 1949 թվի հոկտեմբերի 1-ը:

### ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԳՆՈՒՄՆ ՈՒ ԳՐԱՎ ԴՆԵԼ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱԲԿԴՆԵՐՈՒՄ

Խնայողական դրամաբերը դնում են աշխատավորությունից նոր փոխառության պարտատոմսերը և առաջիս են գրավ վերցրած պարտատոմսերի համար փոխառություններ չմիայն պետական վարկին և խնայողական դորձին ոժանդակող հանձնաժողովների թույլտվությամբ:

### ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Փոխառության իրացումն ինչպես քաղաքում՝ նույնպես և գյուղում սկսվում է 1934 թվի ապրիլի 15-ից և անց ե կացվում լրիվ կամավորության, լայն մասուցական-քաղաքական ագիտացիոն աշխատանքների մեթոդի հիման վրա. բանվորները, կոլտնտեսականները, ծառայողները, կազմակերպված տնայնագործները, սովորողները և քաղաքի անկազմակերպ աշխատավոր ազգաբնակչությունը, ձեռք են բերում փոխառության պարտատոմսերը կոլեկտիվ բաժնեգրության կարգով:

Պարտատոմսերի վճարումը կատարվում է մասմաս վճարման կարգով:

Բանվորների, ծառայողների և քաղաքի այլ աշխատավորական խմբերի համար մաս-մաս վճարման ժամկետը սահմանված է 1934 թվի մայիսի 1-ից մինչև 1935 թվի մարտի 1-ը: Բաժնեգրության առաջին մուծումը վճարվում է 1934 թվի մայիսի առաջին կիսամյակի աշխատավարձից:

Կոլտնտեսականները պարտատոմսերը ձեռք են բերում բաժնեգրության մաս-մաս վճարման կամ կանխիկ վճարման կարգով:

— 34 —

Կոլտնտեսականների բաժնեգրության մաս-մաս վճարման ժամկետի տևողությունը սահմանվում է չորսործկոմների կողմից տեղերում, բայց վոչ ուշ 1935 թվի հունվարի մեկից:

Աշխատավոր մենատնտեսները դնում են պարտատոմսերը կանխիկ վճարման կարգով, վճարելով դնված պարտատոմսերի ամբողջ արժեքը միանվագ կամ մի քանի ժամկետներում:

Քաղաքի բոլոր աշխատավորները պիտի ընդդրկվեն փոխառության մեջ մինչև 1934 թվի մայիսի 1-ը:

Բանվորների և ծառայողների հետ փոխառության բաժնեգրության հաշվարկումները կատարվում են նրանց աշխատավայրերում: Բաժնեգրության մուծումները կողմից հանձնարկված տվյալների հիման վրա, փոխառության մուծումները պահպանվում են բաժնեգրությի աշխատավարձից, հիմնարկ-ձեռնարկության աղմինխստրացիայի կողմից: Բոլոր մուծումները կատարելուց հետո, բաժնեգրություններն իրենց աղմինխստրացիայի միջոցով ստանում են առանձին պարտատոմսեր այն մասերից և արժեքով, վորոնք հայտարարված են յեղել բաժնեգրության թերթերի մեջ: Յեթե բաժնեգրությունը հեռանում է կոլեկտիվից մինչև բաժնեգրության մաս-մաս վճարման ժամկետը լրանալը, ապա այդ բաժնեգրություններին տրվում են պարտատոմսեր վճարված գումարի չափով:

Կոլտնտեսականներն իրենց բաժնեգրության մուծումները վճարում են կանխիկ դրամներով գյուղխորհուրդների լիազորներին: Բաժնեգրության ամբողջ ժամանակաշրջանի հաշվարկումների համար, յուրաքանչյուր կոլտնտեսականներ տրվում են հատուկ անդորադիր:

Վորի մեջ գյուղխորհուրդի լիազորը գրանցում է կոլտնտեսականի յուրաքանչյուր մուծումը: Կոլտնտեսականը կարող է ցանկացած ժամանակ ստանալ գյուղխորհուրդից, ցանկացած մասի և արժեքով պարտատոմսեր իր կողմից վճարված գումարի չափով:

Պարտատոմսերը չստացած կոլտնտեսականներին,

— 35 —

գյուղիսորհուրդը Հանձնում ե պարտատոմսերը յերկու ժամկետներում.— 1934 թվի սեպտեմբերի 1-ին և 1935 թվի հունվարի 1-ին:

Աշխատավոր մենատնտեսներն ստանում են պարտատոմսերը փողը վճարելու ժամանակ:

Այնքան, վորքան նոր փոխառության շահումների վիճակահանությունն սկսվում է բոլոր մուծումները վերջանալուց հետո, ապա համարների ամրացումը և ամրացման կտրոնների հանձնումը բաժանորդներին—չի լինի:

### Լոգունգներ

#### ԼՈԶՈՒՆԳՆԵՐ

«Յերկրորդ հնդամյակի փոխառության յերկրորդ տարվա բաժին» կամպանիայի առթիվ:

Մայիսի 1-ի պրոլետարական տոնին դիմավորենք «Յերկրորդ հնդամյակի փոխառության» լրիվ իրացումով:

Հարյուրավոր նոր դորձարաններ, Փաբրիկաներ, խորհանտեսություններ և ՄՏԿ-ներ կառուցված են առաջին հնդամյակի փոխառություններով:

Յերկրորդ հնդամյակի փոխառությամբ ամրացնենք ԽՍՀՄ-ի Փինանսական հզորությունը:

Ֆինանսական ֆրոնտի հարվածայիններ կազմակերպեցնեք նոր փոխառության հաջող իրացումը քաղաքում և գյուղում, ծավալված մասսայական աշխատանքներով ապահովեցնեք բոլոր աշխատավորների ընդգրկումը «Յերկրորդ հնդամյակի փոխառության» (յերկրորդ տարվա բաժին) մեջ:

Բանվորուհիներ և կոլտնտեսուհիներ. յեղեք «Յերկրորդ հնդամյակի փոխառության» (յերկրորդ տարվա բաժին) բաժնեգրությունը կազմակերպողների առաջին շարքերում:

Կոլտնտեսական դաշտերի բրիգադիրներ. սոցմըբց-

— 36 —

ժան և հարվածայնության մեթոդներով լրիվ և կարճ ժամկետում իրացնենք «Յերկրորդ հնդամյակի փոխառությունը» (յերկրորդ տարվա բաժին) կոլտնտեսականների և մենատնտեսների մեջ:

Յուրաքանչյուր աշխատավորի մասնակցությամբ «յերկրորդ հնդամյակի փոխառությանը» (յերկրորդ տարվա բաժին) ապահովենք 1934 թվի կուլտուրական շինարարության տառնչությունը միլիոնի ծառաշրջի կառավարմբ:

ՀՀ Ազգային գրադարան



NL0204408

274